Digitally signed by
ARAKELYAN RUZANNA 7610660132
Date: 30.06.2025 16:42:45

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 02-06-2025 թ. որոշմամբ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀԱՅԱՍՏԱՆ)»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀԱՅԱՍՏԱՆ)
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ 2/2
1.3 Պետական գրանցման համարը		222.160.852629
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2015-04-08
1.5 ՀՎՀՀ-ն		02636688
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)60722215
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		Fund@agbu.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Վասկեն Յակուբյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	69	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակներ	365,782,799
	Ստեղծարար աքսելերացոն ծրագիր(Եվրոպական Միություն)	353,161,000
	Շվեդիայի արվեստի դրամաշնորհների կոմիտեից ստացված դրամաշնորհ Արտնեքսուս ծրագրի իրականացման համար	68,982,364

	Մարդասիրական օգնությունն Լեռնային Ղարաբաղի փախստականների ներգրավում	228,108,837
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Դեղորայք	30,848,629
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Աջակցություն Սիրիահայ փախստականներին	85,917,167	
ԵՄ Ստեղծարար աքսելերացիոն ծրագիր	614,736,396	
Այբ կրթական հանգույց հիմնադրամի հետ կրթական ծրագիր	7,800,000	
Հայաստանի Կիրառական Քաղաքականության Հետազոտական Ինստիտուտ Հիմնադրամին աջակցություն	19,200,000	
"Ավետիս" լարային քառյակի համերգ	3,550,730	
ՀԲԸՄ-ն բացահայտում է տաղանդներ	2,218,306	
ՀԲԸՄ գործընկերների հետ կապերի ամրապնդման ծրագիր	3,608,680	
ՀԲԸՄ ամսագրի հետ կապված նվիրաբերություն Նյու Մեգ ՍՊԸ-ին	500,000	
Հայ երիտասարդաց ընկերակցություն	3,490,931	
«405 ԿՐԹԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀՄԴ Նվիրատվություն,համաձայն դրամական միջոցների նվիրատվության պայմանագրի AGBU/F-174/24	1,023,000	
ՀԲԸՄ Կին Ձեռներեցներ	129,044,501	
ՀԲԸՄ Կին ծրագրավորողներ	42,274,206	
ՀԲԸՄ հանրային կապեր և ծրագրերի լուսաբանում	38,010,811	
Շվեդիայի արվեստի դրամաշնորհների կոմիտե Արտնեքսուս ծրագիր	32,174,117	

Ճապոնիայի դեսպանատան կողմից Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների պահպանման կենտրոնի համար սարք. ձեռքբերում	3,266,044
Նաղաշ անսամբլի համերգի մասնակցություն	406,500
Մարդասիրական օգնությունն Լեռնային Ղարաբաղի փախստականների ներգրավում	160,085,286
Տարեկան ամփոփիչ միջոցառում	1,776,539
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,499,177,853
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	1,149,083,214

Նշումներ՝

ՀԲԸՄ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀԱՅԱՍՏԱՆ)-ը իրականացնում է նաև ձեռնարկատիրական գործունեություն,մասնավորապես՝ ք. Երևան,ՄելիքԱդամյան 2/2 հասցեում գտնվող գրասենյակային շենքում տարածքների վարձակալությամբ տրամադրում, ք. Երևան, Քանաքեռցու 1 հասցեում գտնվող բազմաֆունկցիոնալ շենքում ուսանողներին կեցության ապահովման ծառայությունների տրամադրում:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 29 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն Հիմնադրամ (Հայաստան)

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Հոգաբարձուների խորհրդի կազմը՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6
Եկամտի և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	7
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն Հիմնադրամ (Հայաստան)»-ի հոգաբարձուների խորհրդին:

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն Հիմնադրամի (Հայաստան) (այսուհետ՝ Հիմնադրամ) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա եկամտի և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար,

որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

30 հունիսի 2025թ.

«ГРАНТ ТОРНТОН» ՓԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО «ГРАНТ ТОРНТОН» АРМЕНИЯ ЕРЕВАН CLOSED JOINT-STOCK COMPANY «GRANT THORNTON» ARMENIA YEREVAN «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

Հոգաբարձուների խորհրդի կազմը՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Պերճ Սեդրակյան

Խորհրդի նախագահ

Սեմ Սիմոնյան

Խորհրդի անդամ

Երվանդ Զորյան

Խորհրդի անդամ

Եկամտի և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Շնորհներից եկամուտ	6	1,184,947	651,571
Ծրագրային ծախսեր		(1,181,990)	(651,571)
		2,957	**-**
Վարձակալությունից եկամուտ	7	287,707	299,202
Շենքերի պահպանման հետ կապված ծախսեր	8	(132,314)	(122,410)
		158,350	**176,792**
Այլ եկամուտ		6,791	90
Վարչական և ընդհանուր ծախսեր	9	(309,236)	(110,375)
Գործառնական արդյունք		**(144,095)**	**66,507**
Ֆինանսական եկամուտ (ծախս), զուտ		9,949	(6,280)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)		(10,164)	13,270
Արդյունք մինչև հարկերը		**(144,310)**	**73,497**
Շահութահարկի գծով ծախս	10	(3,415)	(7,794)
Տարվա զուտ արդյունք		**(147,725)**	**65,703**

	2024թ.	2023թ.
Զուտ ակտիվները տարվա սկզբում	197,494	131,791
Տարվա զուտ արդյունք	(147,725)	65,703
Զուտ ակտիվները տարվա վերջում	**49,769**	**197,494**

Եկամտի և ծախսերի և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	36,152	22,904
Ոչ նյութական ակտիվներ		352	-
Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում	5	-	48,500
Տրամադրված փոխառություններ		-	64,790
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**36,504**	**136,194**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	12	32,365	16,748
Կանխավճարների և այլ դեբիտորական պարտքեր	14	340,407	267,639
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	283,478	574,100
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**656,250**	**858,487**
Ընդամենը ակտիվներ		**692,754**	**994,681**

Կուտակված արդյունք		49,769	197,494
Ընդամենը զուտ ակտիվներ		**49,769**	**197,494**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	16	10,457	5,637
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**10,457**	**5,637**
Ընթացիկ			
Հետաձգված եկամուտ	17	589,509	758,245
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	18	39,604	25,511
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		3,415	7,794
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**632,528**	**791,550**
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		**692,754**	**994,681**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. հունիսի 30-ին:

Վասկեն Յակուբյան
Գործադիր տնօրեն

Ռուզաննա Առաքելյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	(147,725)	65,703
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	12,332	6,579
Շահութահարկի գծով ծախս	3,415	7,794
Դուստր ընկերության ձեռքբերման հետ կապված մարումներ	48,500	-
Փոխառությունների դուրսգրում	74,739	-
Ֆինանսական եկամուտ (ծախս)	(9,949)	6,280
Շնորհներից եկամուտ	(1,184,947)	(651,571)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ) վնաս	10,164	(13,270)
Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	**(1,193,471)**	**(578,485)**
Պաշարների փոփոխություն	(10,621)	6,665
Կանխավճարների և դեբիտորական պարտքերի փոփոխություն	(72,768)	(160,810)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	14,093	3,877
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	**(1,262,767)**	**(728,753)**
Վճարված շահութահարկ	(7,794)	(13,684)
Ստացված շնորհներ	1,016,035	957,234
Գործառնական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**(254,526)**	**214,797**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(25,932)	(12,854)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(25,932)**	**(12,854)**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	(280,458)	201,943
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(10,164)	13,270
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	574,100	358,887
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	**283,478**	**574,100**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն Հիմնադրամ (Հայաստան)

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն Հիմնադրամ (Հայաստան)»-ի (այսուհետ՝Հիմնադրամ) և նրա դուստր ընկերության «Արքուս» ՍՊԸ-ի (այսուհետ բոլորը միասին՝ «Խումբ») ֆինանսական հաշվետվությունները:

Հիմնադրամը հիմնադրվել է ԱՄՆ ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» հիմնադրամի կողմից: Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2015թ. ապրիլի 8-ին:

Հիմնադրամը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, հոգևոր և այլ հանրօգուտ նպատակներ:

«Արքուս» ՍՊԸ-ն (100 % բաժնեմասնակցություն) Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2017թ. նոյեմբերի 20-ին: «Արքուս» ՍՊԸ-ն ունի 100% ներդրում «Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ-ի սեփական կապիտալում: 2024թ. դեկտեմբերի 16-ին «Արքուս» ՍՊԸ-ն ձեռք է բերել «Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ-ի 50 % բաժնեմասնակցություն, դառնալով 100% մասնակից: Կանոնադրական կապիտալի փոփոխություն տեղի չի ունեցել:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

Հիմնադրամի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մելիք Ադամյան, 2/2: 2024թ.-ին Խմբի հիմնական աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 71 մարդ (2023թ.՝ 56 մարդ):

Դուստր ընկերություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված է հետևյալ դուստր ընկերությունը.

31 դեկտեմբերի 2024թ. Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Ձեռքբերման ամսաթիվ
«Արքուս» ՍՊԸ	100	Հայաստան	20 նոյեմբերի 2017թ.	Առևտրային	20 նոյեմբերի 2017թ

31 դեկտեմբերի 2023թ. Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Ձեռքբերման ամսաթիվ
«Արքուս» ՍՊԸ	100	Հայաստան	20 նոյեմբերի 2017թ.	Առևտրային	20 նոյեմբերի 2017թ.

2024թ. համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված է նաև «Արքուս» ՍՊԸ-ի դուստր ընկերությունը (2023թ. չի ներառվել համախմբված ֆինանսական հաշվետվություններում).

31 դեկտեմբերի 2024թ. Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Ձեռքբերման ամսաթիվ
«Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ	100	Հայաստան	3 սեպտեմբերի 2018թ.	Առևտրային	16 դեկտեմբերի 2024թ.

31 դեկտեմբերի 2023թ. Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Ձեռքբերման ամսաթիվ
«Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ	50	Հայաստան	3 սեպտեմբերի 2018թ.	Առևտրային	27 դեկտեմբերի 2021թ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Խումբը ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Խմբի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով արտահանողների և արտարժութային պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար: Համաշխարհային գնաճը և էներգայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի իր ձեռնարկատիրության՝ այդ ռիսկերը արդյունավետորեն նավարկելու կարողությունից:

Տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Խմբի ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2024թ. Հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. Հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),
- *«Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալությամբ գործարքներում»* (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),
- *«Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ):

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- *«Փոխանակելիության բացակայություն»* (ՀՀՄՍ 21 փոփոխություն),
- *«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ),
- ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»:*

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

4.1 Պատրաստման հիմքերը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

4.2 Համախմբման հիմքեր

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

4.3 Արտարժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Խմբի համախմբված ֆինանսական

հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
ՀՀ դրամ/1 Եվրո	413.89	447.90

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

4.4 Եկամուտ և հասույթ

Խմբի եկամուտները գոյանում են հիմնականում շնորհների իրացումից և հիմնադրից անհատույց օգտագործման նպատակով ստացված շենքերի վարձակալությունից և այլն:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Եկամուտ նվիրատվություններից

Խմբի կողմից ստացված նվիրատվությունները, որոնց ստացման հետ կապված չեն գործում որևէ պայմաններ, ճանաչվում են որպես եկամուտ, երբ դառնում են ստացման ենթակա:

Ստացված նվիրատվությունները, որոնք նպատակաուղղված են որոշակի ծախսեր կատարելու համար, ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ ընթացիկ ժամանակաշրջանում, իսկ հետագայում ճանաչվում են տարվա արդյունքում սիստեմատիկ հիմունքով այն նույն ժամանակաշրջանում, որոնցում ճանաչվում են ծախսերը:

Վարձակալությունից եկամուտ

Վարձակալությունից եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Այն ճանաչվում է յուրաքանչյուր ամսվա վերջում, երբ համապատասխան հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում:

4.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 1 տարի:

4.6 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	- 3-8 տարի
Տնտեսական գույք	- 1-8 տարի
Այլ	- 1-8 տարի

4.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բանկային ավանդների արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում : Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 13-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և բանկային ավանդները:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը և վարձակալության գծով պարտավորությունները, որոնք ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 13-ում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4.8 Պաշարներ

Պաշարները հիմնականում ներառում են «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ից ստացված դեղորայքը, որոնք պահվում են բարեգործական նպատակով օգտագործելու համար: Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված գնահատման հաշվետվություններում արտացոլված արժեքներից նվազագույնով: «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի գնահատման հաշվետվություններում արտացոլվում է նշված դեղորայքի՝ Հայաստանյան շուկայում շրջանառվող գինը:

4.9 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերող շնորհ և սիստեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական

արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Խմբի կանոնադրական նպատակների համար ստացված շնորհը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես եկամուտ այն տարում, երբ դրանք ստացվել են:

4.10 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

4.11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4.12 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ,Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.13 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա համախմբված ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

5 Դուստր ընկերության ձեռքբերում

	Հիմնական գործունեություն	Ձեռքբերման ամսաթիվ	Ձեռքբերված բաժնեմաս
2024թ.			
«Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ	Առևտրային	16 դեկտեմբերի 2024թ.	50%

Ստորև ներկայացված աղյուսակում ցույց է տրվում ձեռքբերված ընկերության ֆինանսական տվյալները ձեռքբերման օրվա՝ 2024թ. դեկտեմբերի 16-ի, դրությամբ.

	«Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ	
	Հաշվեկշռային արժեք	Ձեռքբերման իրական արժեք
Ընթացիկ ակտիվներ		
Դրամական միջոցներ	303	303
Ընդամենը ակտիվներ	**303**	**303**

	«Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ	
	Հաշվեկշռային արժեք	**Ձեռքբերման իրական արժեք**
Ընթացիկ պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	26,002	26,002
Ստացված փոխառություններ	36,559	36,559
Ընդամենը պարտավորություններ	**62,561**	**62,561**
Կանոնադրական կապիտալ	97,000	97,000
Կուտակված վնաս	(159,258)	(159,258)
Ընդամենը սեփական կապիտալ	**(62,258)**	**(62,258)**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**303**	**303**
Նախորդ բաժնեմասնակցության իրական արժեք		48,500
«Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ զուտ ակտիվների իրական արժեք՝ ձեռքբերման օրվա դրությամբ		62,258
Ձեռք բերված գուդվիլ		**110,758**

Ձեռք բերված գուդվիլն իրենից ներկայացնում է նախորդ բաժնեմասնակցության իրական արժեքի և ձեռքբերման օրվա դրությամբ «Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ-ի զուտ ակտիվների իրական արժեքի հանրագումարը:

6 Շնորհներից եկամուտ

	2024թ.	**2023թ.**
Հետաձգված եկամտի օգտագործումից (տե՛ս Ծանոթագրություն 17)	1,179,883	649,765
Ակտիվներին վերաբերող շնորհներից (տե՛ս Ծանոթագրություն 16)	5,064	1,806
	1,184,947	**651,571**

7 Վարձակալությունից եկամուտ

	2024թ.	**2023թ.**
Ք. Երևան Մելիք Ադամյան 2/2 հասցեում գտնվող շենքի վարձակալություն	260,651	272,179
Ք. Երևան Քանաքեռցի 1 հասցեում գտնվող շենքի վարձակալություն	27,056	27,023
	287,707	**299,202**

8 Շենքերի պահպանման հետ կապված ծախսեր

	2024թ.	2023թ.
Ք. Երևան Մելիք Ադամյան 2/2 հասցեում գտնվող շենք		
Գրասենյակային, կոմունալ և այլ ծախսեր	49,799	45,970
Հատուցումներ աշխատակիցներին	49,437	42,318
Ք. Երևան Քանաքեռցի 1 հասցեում գտնվող շենք		
Գրասենյակային, կոմունալ և այլ ծախսեր	27,889	28,349
Հատուցումներ աշխատակիցներին	5,189	5,773
	132,314	**122,410**

9 Վարչական և ընդհանուր ծախսեր

	2024թ.	2023թ.
Հատուցումներ աշխատակիցներին	100,758	63,575
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	11,560	13,968
Ապահովագրական ծախսեր	13,266	10,871
Մաշվածություն	10,215	3,538
Գուդվիլի արժեզրկումից վնաս	110,758	-
Փոխառությունների զիջում	38,180	-
Այլ ծախսեր	24,499	18,423
	309,236	**110,375**

2024թ. դեկտեմբերի 16-ին «Արքուս» ՍՊԸ-ն ձեռք է բերել «Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ-ի մյուս 50% բաժնեմասնակցությունը, դառնալով 100% մասնակից: Արդյունքում՝ գոյացել է գուդվիլ 110,758 հազար ՀՀ դրամ (տե՛ս Ծանոթագրություն 5), որն ամբողջությամբ արժեզրկվել է: Արժեզրկման հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ «Փոյնթ օֆ վյու» ՍՊԸ-ն գործունեություն չի ծավալում և մոտ ապագայում դեռ գործունեության հեռանկար չկա:

10 Շահութահարկի գծով ծախս

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկ	3,415	7,794
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**3,415**	**7,794**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(144,310)		73,497	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	(25,976)	18.00	13,229	18.00
Չնվազեցվող ծախսեր, զուտ	29,391	(20.37)	(5,435)	(7.40)
Շահութահարկի գծով ծախս	**3,415**	**(2.37)**	**7,794**	**10.60**

11 Հիմնական միջոցներ

	Մեքենաներ և սարքավորումներ	Տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	30,811	17,529	3,452	51,792
Ավելացում	6,219	6,635	-	12,854
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**37,030**	**24,164**	**3,452**	**64,646**
Ավելացում	13,864	11,708	-	25,572
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**50,894**	**35,872**	**3,452**	**90,218**
Կուտակված մաշվածություն և արժեզրկում				
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	23,024	11,623	516	35,163
Տարվա հաշվարկ	4,481	2,048	50	6,579
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**27,505**	**13,671**	**566**	**41,742**
Տարվա հաշվարկ	7,671	4,603	50	12,324
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**35,176**	**18,274**	**616**	**54,066**
Հաշվեկշռային արժեք				
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**9,525**	**10,493**	**2,886**	**22,904**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**15,718**	**17,598**	**2,836**	**36,152**

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

12 Պաշարներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Պահպանման կենտրոնի համար նախատեսված գույք*	31,260	-
Դեղորայք	416	16,059
Այլ	689	689
Ընդամենը դրամական միջոցներ	**32,365**	**16,748**

*«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների Պահպանման կենտրոնում սարքավորումների տեղադրում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կնքվել է սարքավորումների մատակարարման պայմանագիր՝ Պահպանման կենտրոնը համալրելու նպատակով: Պայմանագրի շրջանակներում մատակարարից ստացված գույքը դեռ չի հանձնվել և տեղադրվել, պայմանավորված Պահպանման կենտրոնում վերանորոգման աշխատանքների անավարտվածությամբ: Հետևաբար, այն հաշվառվում է պաշարներում, մինչ դրանց վերջնական տրամադրումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններին:

13 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

13.1 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.7-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Տրամադրված փոխառություններ	-	64,790
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17,281	36,888
Դրամական միջոցներ	283,478	574,100
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**300,759**	**675,778**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**300,759**	**675,778**

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր	33,990	17,366
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	**33,990**	**17,366**
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**33,990**	**17,366**

14 Կանխավճարներ և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	9,475	33,255
Այլ դեբիտորական պարտքեր	7,806	3,633
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**17,281**	**36,888**
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	312,957	216,307
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	10,169	14,444
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	**323,126**	**230,751**
Ընդամենը կանխավճարներ և այլ դեբիտորական պարտքեր	**340,407**	**267,639**

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խմբի՝ համեմատական ժամանակաշրջանի առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:

Տրված կանխավճարերը ներառում են «Քրիեյթիվ Արմենիա« մշակութային հիմնադրամին և անհատ ձեռնարկատերերին տրված ենթադրամաշնորհները: Ենթադրամաշնորհառուների կողմից ընդունելի ծախսերի վերաբերյալ ներկայացված հաշվետվությանների հիման վրա, Հիմնադրամը կծախսագրի այս կանխավճարները «Ծրագրային ծախսեր« հոդվածով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերն ամբողջությամբ արտացոլված են հայկական դրամով:

15 Դրամական միջոցներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Կանխիկ միջոցներ	179	179
Բանկային հաշիվներ	283,299	573,921
Ընդամենը դրամական միջոցներ	**283,478**	**574,100**

Տե՛ս Ծանոթագրություն 21.1՝ դրամական միջոցների արժույթների բացահայտման համար:

16 Ակտիվների վերաբերվող շնորհներ

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	5,637	3,977
Ավելացում	9,884	3,466
Տարվա ընթացքում օգտագործում (տե՛ս Ծանոթագրություն 6)	(5,064)	(1,806)
Տարեվերջի մնացորդ	**10,457**	**5,637**

17 Հետաձգված եկամուտ

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	758,245	447,833
Ավելացում (ստացված միջոցներ) (տե՛ս ստորև)	1,016,035	957,235
Ավելացում («Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ից ստացված դեղորայք)	30,849	161,748
Ստացված դեղորայքի արժեքի ճշգրտում	(25,853)	(155,340)
Եկամտի ճանաչում (ստացված միջոցներ) (տե՛ս Ծանոթագրություն 6)	(1,172,136)	(643,100)
Եկամտի ճանաչում (դեղորայք) (տե՛ս Ծանոթագրություն 6)	(7,747)	(6,665)
Վերադասակարգում ակտիվներին վերաբերող շնորհներին	(9,884)	(3,466)
Տարեվերջի մնացորդ	**589,509**	**758,245**

Ստացված միջոցների ավելացումները ներկայացնում են հետևյալ կազմակերպություններից ստացված միջոցները՝

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» հիմնադրամ	365,667	279,653
Կատապուլտ Քրիեյթիվ Աքսելերատոր ծրագիր	353,161	578,759
Շվեցարիայի Ավետարանական եկեղեցիների օգնության հիմնադրամ	228,109	12,104
Շվեդական արվեստի դրամաշնորհների կոմիտե	68,982	51,453
Այլ	116	35,266
	1,016,035	**957,235**

18 Կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	28,147	8,550
Հաճախորդներից կանխավճարներ	5,464	6,847
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	5,843	8,816
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	150	1,298
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**39,604**	**25,511**

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

19 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են հիմնադիր ընկերությունը, հոգաբարձուների խորհրդի անդամները, հիմնական ղեկավար անձնակազմը:

19.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդներ չկան:

	2024թ.	2023թ.
Ստացված ֆինանսավորում	365,667	279,653
Ընդամենը	**365,667**	**279,653**

19.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմ են հանդիսանում գործադիր տնօրենը, ֆինանսական տնօրենը, գլխավոր գործառնական տնօրենը և գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը, որոնք ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

	2024թ.	2023թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	11,540	10,726
Ընդամենը	**11,540**	**10,726**

20 Պայմանականություններ

20.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Խումբը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Խմբի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

20.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

21 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունները և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

21.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի արտերկրյա ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	Շվեյցարական ֆրանկ
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ	32,488	40,893	63,429

Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	Շվեյցարական ֆրանկ
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**32,488**	**40,893**	**63,429**
Զուտ արդյունք	**32,488**	**40,893**	**63,429**

Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	ԱՄՆ դոլար	Եվրո	Շվեյցարական ֆրանկ
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ	50,984	238,573	12,086
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**50,984**	**238,573**	**12,086**
Զուտ արդյունք	**50,984**	**238,573**	**12,086**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը : 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	3,249	5,098	4,098	23,857
	3,249	**5,098**	**4,098**	**23,857**

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի ՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

21.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Խմբի համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը և բանկերում մնացորդները: Խումբը կարգավորում է այս ռիսկը դրամական միջոցները հեղինակավոր բանկերում պահելու միջոցով: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի հավաքագրման հետ կապված ռիսկերը շատ փոքր են: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

	2024թ.	2023թ.
Դրամական միջոցներ	283,299	573,921
Տրամադրված փոխառություններ	-	64,790
Այլ դեբիտորական պարտքեր	17,281	36,888
Ընդամենը	**300,580**	**675,599**

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի բանկային հաշիվների մնացորդները կազմում էին համապատասխանաբար 283,299 հազար ՀՀ դրամ և 573,921 հազար ՀՀ դրամ, ինչը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են ընդհանուր ակտիվներով տասը խոշոր հայկական բանկերից հանդիսացող բանկերում, և Խումբը չի ակնկալում, որ այդ բանկերը չեն կատարի իրենց պայմանագրային պարտականությունները: Խմբի գնահատմամբ բանկային հաշիվների մնացորդների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել, ինչը հիմնականում պայմանավորված է վերջիններիս կարճաժամկետ բնույթով:

21.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2024թ	Անտոկոս	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		
Մինչև 6 ամիս	28,147	28,147
6 ամսից մինչև 1 տարի	5,843	5,843
	33,990	**33,990**

2023թ	Անտոկոս	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)		
Մինչև 6 ամիս	8,550	8,550
6 ամսից մինչև 1 տարի	8,816	8,816
	17,366	**17,366**

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները, առևտրային դեբիտորական պարտքերը և ստացվելիք դրամաշնորհները: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը բավարար են անհրաժեշտ դրամական արտահոսքերը կատարելու համար: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 1 ամսվա ընթացքում:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2025 16:40